№ 119 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 31 ՄԱՅԻՍԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . 10 ռուբ.
Կէս տարին . . . . . 6 ռուբ.
Ամսական . . . . . 1 ռուբ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . 12 ռուբ.
Կէս տարին . . . . . 7 ռուբ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պիտի վերջանայ անպատճառ յետագայ որևէ ամսի վերջին։
Ցուցիչի մէկից մինչև տարւայ վերջը արժէ 7 ռուբլի։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐ. և ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹ. ՉԷ ԸՆԴՈՒՆՈՒՄ
Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԵԿ (կարելի է և մարկաներով) և ինչ հասցէից, ուստից որի դիմումները կը ՀԱՆՁՆՈՒՆՔ։

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1916 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 31 ՄԱՅԻՍԻ № 119

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՎ.—1-ին երեսի վրայ տողին (պարար) 10 կոպ., Կովկասից դուրս՝ 20 կոպ., 4-րդ երես 5 կոպ., Կովկասից դուրս՝ 10 կոպ.։
ԱՊԱՌԻԿ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Խմբագրութիւնը բաց է 8—2 ժամ., գրասենեակը 9—3 ժ. երեկ. և 6—8 ժ. երեկ.
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐԻ ՄՕՏ՝ ժ. 2-ից մինչև 3-ը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Горизонтъ". Сологубовская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57. կամ Tiflis (Russie, Caucase), Redaction „Horizon".

ՕՐԻԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արևմտեան ճակատի հարաւային մասում ռուսների յաղթութիւնը օր օրի վրայ ծաւալւում է. մինչև այժմ գերի է վերցուած ընդհանուր առմամբ 1 գեներալ, 1649 սպայ, աւելի քան 106,000 զինուոր, խլուած է 124 թնդանօթ, 180 գնդացիր, 58 ռմբաձիգ և անթիւ քանակութեամբ ուրիշ աւարներ։ Կռիւները շարունակւում են։

Կովկասեան ճակատում յետ են մղուած թիւրքերի յարձակումները Գլատանա քաղաքի արևմտեան կողմը Տրապիզոնի շրջանում։ Գիւմիւշխանէի ուղղութեամբ ռուսները գրաւել են թշնամու խրամատների առաջին գիծը։ Դիարբէքիրի ուղղութեամբ ռուսներն առաջ են անցել։

Վերդենի մօտ տեղի են ունենում միայն թնդանօթամարտեր։

Իտալական ճակատում իտալացիները մի տեղ յետ քաշւելով, մի քանի ուրիշ տեղերում առաջ են անցնում։

Ադրիատիքական ծովում թշնամու սուզանաւերը խորտակել են իտալական մի փոխադրանաւ զօրքերով։

«Հորիզոն»-ի բաժանորդներից նրանք, որոնք այս տարւայ հաշւին վճարել են **5 ՌՈՒԲԼԻ**, թող շտապեն ուղարկելու մնացած **5 ՌՈՒԲԼԻՆ** և. հակառակ դէպքում յունիս 1-ին կը դադարեցւի նրանց թերթի առաքումը։ Դրամի հետ ուղարկել նաև թերթի փաթեթի վրայի տպագրած հասցէն։

«ՀՈՐԻԶՈՆ»-Ի ԳՐԱՍԵՆԵԱԿ

Էլեֆեռ- „ԼԻՐԱ" Թատրոն
Մայիսի 29, 30 և 31-ին
ՀԱԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՀԱԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՉԱՓԱԶԱՆՑ ՈՒՇ Է
Ուժեղ դրամա 3 մեծ մասերից, մասնակցութեամբ Սիւզաննա Գրանդէի։
ՎԱԽԵՑԻՐ ԱՅՆ ՁՐԻՑ,
ՈՐ ՈՉ ԿԸ ԽԾՇԱՑ, ՈՉ ԿԸ ԹԾՇԱՑ
Ուրախ ֆարս, մասնակցութեամբ Բորիսովի, 3 մեծ մասից։
ԱԶԴ.—Մօտ օրերս կը ցուցադրւի ԱՆՏՈՆ ԿՐԵՁԵՏԻ, 2-րդ սերիա։
933 0—51

Ի պատիւ մեր թանկագին հիւր՝ արւեստի և գրականութեան փայլ՝
ԻՇԽ. ԱԼ. ԻԻ. ՍՈՒՄԲԱՏՈՎ-ԻԻԺԻՆԻ
ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍԻ 31-ին ԹԻՖ. ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՄԱՐԱՑԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
Կը կայանայ ԲԱՆԿԷՏ.
Սկիզբը 11 ժամին երեկոյեան։
Նրանք, որոնք կամենում են մասնակցել յարգանքի մատուցման վաստակաւոր դրամատուրգին և արտիստին, հրաւիրւում են վաղօրօք ստորագրւել՝ «Հայոց դրամատուրգին և արտիստին, հրաւիրւում են վաղօրօք ստորագրւել՝ «Հայոց Դրամատիկ. Ընկ., Արտիստիկ. Ընկ., Ժողովրդ. Տան Դրամատիկ. Ընկ., Վրաց Դրամատիկ. Ընկ., Գեղագիտական Սալօնում, „Кавк. Слово"-ի, «Համբաւարարում, Դրական-

ՔԵՌԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԹԱՂՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Ցարդանքի այն չափը, որ մեր հասարակութիւնը սովորել է արդէն մատուցանել իր հերոսներին՝ անհուն բերկրանքով է լցնում մարդու հոգին։

Մարդ ապշում է մեր ժողովրդի այսօրինակ սառնասիրտ ու անվհատ վերաբերմունքից։ Այս սոսկալի տակնուվրայութեան օրերին իսկ հայ ժողովուրդը իրեն չի կորցնում այն աստիճան, որ հսկայական բազմութեամբ յուզարկաւորում է ամեն անգամ իր սիրելի հերոսներին, երբ մեր ազատագրութեան սրբազան սեղանին ողջակիզելով մէկն ու մէկը, գալիս է աւելանալու մեր նահատակների թիւին։

Երեկ Արտաշէս Սուքեան, այսօր Քեռի իրենց մահով եկան ազատագրելու, որ հայը իր ազատութեան համար արդէն արթնացել է լիովին և որ այսօր իրենց յուզարկաւորութեամբ նրանք տանում են իրենց ետևից տասնեակ հազարներով յարգողներ...

ՔԵՌԻՆ (պատկերի մէջ տեղը) ԻՐ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ

Քեռի թաղման օրն էր, կիրակի, մայիսյա 29-ին։ Ցարգողների մի վիթխարի բազմութիւն լցրել էր ոչ միայն Վանքի աւագ եկեղեցին, ոչ միայն նրա ընդարձակ բակը, այլ և շրջապատի փողոցները։

Այդ օրը պատարագում էր Թիֆլիսի թեմի սրբազան առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս, իսկ պատարագին երգում էր Ներսիսեան ազգային դպրոցի երգեցիկ խումբը։

Եկեղեցին լիքն էր ամեն կարգի երկսեռ բազմութեամբ—հոգևորականներ, վաճառականներ, արհեստաւորներ, բանւորներ, ինտելիգենտներ, աշակերտներ, զինուորականներ եկել էին իրենց վերջին հրաժեշտը տալու ազգային հերոսին։

Սրբազան առաջնորդը պատարագի կիսին մի սրտառուչ քարոզ խօսեց, բնաբան առնելով—«Անցո՛, Տէր, բաժակս այս»։

Նա պատմեց Քրիստոսի նախապատարագութիւնը Գէթսեմանի այգում Գողգոթայի գագաթին խաչելու համար և նրա խօսակցութիւնը իր Հօր հետ։ Եւ ապա համեմատելով Քեռու գնացած ճանապարհը, նրա ընտրած գաղափարը Յիսուսի հետ դաւաճանման, որովհետև Քեռին էլ գիտակցօրէն գնաց դէպի ճշմարիտ մահ իր տանջած ցեղի ազատագրութեան համար։

Պատարագից յետոյ դագաղի շուրջը հարկաւոր կրօնական ծիսակատարութիւնն անելով դագաղը վերցրին իր խմբապետ զինակիցները և դուրս հանեցին բակը։ Ապա այնտեղից կամաւորները ուսերին առան փոխ առ փոխ մինչև Խոջիվանքի գերեզմանատուն։

Գաղափարութիւններ եկել էին՝ Բաքուից (Աբաբատեան, Բաբունակեան, Աւալեան), Ախալցխայից և Ալէքսանդրապոլից, Խաչվանքեան քահանայ, Հալաջեան և ուրիշներ*)։

Դագաղի առաջից Ներսիսեան դպրոցի աշակերտներ, բանւորներ, կամաւորներ տանում էին բազմաթիւ պսակներ, որ զրուած էին մեր ազգային հերոս Անդրանիկի, Ազգային Բիւրոյի, Ղարաքլիսայի հասարակութեան, IV բանակի, Դրօի, Ш բ. Տիգրան Մուրադեանի. Ե. Օլթեցեանի, Ցարութիւնի և Բարսեղի, Ալէքսանդրապոլի ընկերների, հայ կամաւորների պահեստի գնդի, Եղբ. Բոյեաճեանների, հայկական II-դ գումարտակի, Ալէքսանդրապոլի հասարակութեան, Երևանի Հայուհեաց Ընկերութեան, Հայկական IV գումարտակի, Քեռու օգնական Միշայի, Վասպուրականի գաղափարակից ընկերների և իր «Զոփուռ Դաւթի» կողմից**)։ Իսկ դագաղի ետևից գնում էր մի չտեսնուած բազմութիւն, որի մի ծայրն արդէն Ցիցիանեան վիրելքին էր հասել, միւս ծայրը դեռ խռնուում էր Վանքի բագում. Նա 30,000-ից աւելի կը լիներ։ Դեղեցիկ կարգապահութեամբ յուզարկաւորութիւնը հասաւ Խոջիվանքի գերեզմանատուն։ Հերոսի դին զետեղուեց փոսի եզրին։ Մօտիկ ընկերները և քահանաների մի սուրբ խումբ կանգնեցին շուրջը։ Դագաղի դէմ յանդիման—Անդրանիկը իր զինուորական համազգեստով։ Բազմութիւնը խռնուում է շարունակ, ահագին տարածութեան վրայ բառիս բուն մտքով ասել գցելու տեղ չկար։

Խօսելու ժամն է։ Ընկերների կողմից Մ. Վարանդեանը հետևեալ դամբանականն ասաց.

«Իշխանական պատիւներով է գերեզման իջնում հայոց ազատութեան զինուորը։ Իշխանական պատիւներով էր, որ թաղեցին և նրա աւագագոյն ընկերները.—այստեղ Խոջիվանքում Զաւարեանն ու Դումանը, այնտեղ հեռու Պարսկաստանում՝ Սփբեմը, անդին, աւելի հեռու հորիզոններում՝ Բրիսապորը։

... Որովհետև իշխաններ են այդ մարդիկ իրենց անուշը, սպարապետական վեհութեան մէջ, իշխաններ հայ մտքի ու սրտի, հայ ռազմական կորովի, հայ ցեղային արիութեան։

Մեծ, ծովացած բազմութիւն դագաղի շուրջը։ Ժողովուրդն է իր բոլոր խաւերով։ Հայ ինտելիգենցիան՝ իր լուսագոյն ներկայացուցիչներով, հայ զինուորութիւնը՝ իր փայլուն ռազմիկներով։ Եւ նրանց շարքում մէկը՝ որ մեծագոյն զինակիցն է անշնչացած հերոսի, մէկը՝ որ հոգին է մեր կամաւորական շարժման, մէկը՝ որի ներկայութիւնը առանձնապէս յուզիչ է դարձնում այս թաղման հանդէսը...

Այո՛, ժողովուրդն է, որ ուղեկցել է միշտ Քեռիներին դէպի գամբարան։ Ժողովուրդն է, որ գուրգուրանքով պահպանում է հերոսների պաշտամունքը։ Ժողովրդական զանգուածներն են, որ խուսներում գալիս են դագաղի ետեւից, գալիս են ազատորէն, ինքնաբերաբար իրենց վերջին յարգանքը մատուցանելու մի մարդու, որ ապրել ու մեռել է ժողովրդական դատի համար։

... Կենդանութեան օրով գուցէ լիովին չեն գնահատուում այս մարդիկ, մահից յետոյ է, որ զգացուում է սարսափելի բացը... Եւ անգամ նրանք, որոնք ամեն օր նիզակ են ճօճում անձնուրացների բանակի դէմ, համբերելով այն «աղբիւր չարեաց», բարդելով նրա վրայ բոլոր ցաւերի պատասխանատուութիւնը,—անգամ նրանք ժողովրդական սգի այս օրերին խոնարհուում են Քեռիների դագաղի առջև...

Եւ դա պերճախօս ապացոյցն է այն կախարդանքի, կասեմ, բանաւոր ազդեցութեան, որ անում են մեր ժողովրդական հերոսները ազգի բոլոր խաւերի վրայ։ Դա ապացոյց է մասամբ այն իրողութեան՝ որ սխալւում են չարաչար այն մարդիկ, որոնք կուրօրէն, առանց երկար տրամաբանելու, մերռազմիկների շարքերին են վերագրում մեր նորագոյն պատմութեան արհաւիրքները...

. . . . . .

Թող ուրիշները պատժեն ձեզ կենսագրութիւնը մեր հանգուցեալ ռազմիկի, սկսած առաջին քայլերից 1890-ին, Կարինում, երբ առաջին անգամ հայ ժողովուրդը ըմբոստանում էր տասնիկ բռնապետութեան դէմ և երբ առաջին անգամը մենք կովկասցիներս երգում էինք «Զայնը հնչեց Էրզրումի լեռներէն»... Թող ուրիշները բացատրեն, թէ ինչումն էր գաղտնիքը նրա ահագին ժողովրդականութեան, թէ ինչու էր նա այնքան սիրուած իր վաշտերից ու վաշտապետներից... Ինքս միայն նրա դէմքն եմ տեսել, նրա բազէի աչքերն եմ դիտել մի քանի օր, առանց երկար խօսելու հետը, որովհետև խօսել չէր սիրում—մանաւանդ իր մասին — ըմբոստութեան այդ քուրմը։ Դաժան, անհամբոյր էին նրա ձեռները, բայց նոյնքան դաժան չէր նրա սիրտը... Պարզ, լակոնիկ, համեստ,—համեստ մինչև կատարեալ ինքնաժխտում. զինուոր ազատութեան առանց թմբուկի ու ժխորի... Պաղ էր արտաքինը, բայց կրակը ներսուց էր լափում նրան, ոգևորութիւնը խոր էր, անձայն, ինքնամփոփ։

Եւ միաժամանակ—կուռ, գաղափարական գիսցիպլինի մարդ։ Երբեմն դառնութեան ու յուզման վայրկեաններին ըմբոստացումի ժեստեր կանէր, բայց և իսկոյն կը խորհէր ու շուտով նորէն կը վերադառնար, անշշուկ, իր գործին։ Ի՞նչն էր ստիպում նրան երկու տարի սրանից առաջ, արդէն կորացած տառապանքի բեռի տակ, նորէն սլանալ դէպի կուռ գաղտ, թողնել ընտանեկան խաղաղ կենցաղը Թեհրանում, ուր նա իրաւունք ունէր հանգստանալու, ամբողջ կեանքը կրուելուց յետոյ, իրաւունք ունէր հանգստութեան մէջ վայելելու իր անհամար դափնիները։

Ի՞նչն էր ստիպում... Դիսցիպլինի «վճռական հրամայականը», իր ըմբոստ արիւնը և իր ջինջ, քնքոյշ, անշահախնդիր սէրը դէպի հարազատ ժողովուրդը...

Դիսցիպլինի մարդիկ էին և նրանք, որ պատկած են երկու քայլ հեռու Քեռի գամբարանից։ Դիսցիպլինի մարդ էր Դումանը իր պողպատէ կամքով և իր պաղ, ահաւոր վճռականութեամբ։

Դիսցիպլինի մարդ էր և միւսը, նրա դրացին, որի ձայնը քսան տարի ոգևորում էր հայ ըմբոստ երիտասարդութիւնը. դիսցիպլինի մարդիկ էին բոլորը, որովհետև լաւ գիտէին, որ առանց այդ կուռ, ընկերային դիսցիպլինի ոչ մի գաղափարական գործ պատմութեան մէջ չի յաղթանակել երբէք... որովհետև գիտէին և այն, որ հենց այն Ուխտը, որին պատկանում էին նրանք, ամբողջ տասնեակ տարիներ կանգուն էր՝ շնորհիւ այդ կուռ, գաղափարական շաղախի...

. . . . . .

Եփրեմի հետ միասին Կուկունեանի պատմական արշաւախմբում—և նոյն Եփրեմի հետ, քսան տարի յետոյ, Պարսկաստանի ազատագրական շարժումներում։ Երկու հայ դէմքեր թե թեի վարում էին ահագին երկրի ճակատագիրը, յենած մի բուռն հաւատարիմ հայ քաջերի և պարսիկ բախտիարների վրայ... Եփրեմ — Քեռի, Քեռի—Եփրեմ—երկու անունները հոլովւում էին անդադար հայ ու օտար մամուլի մէջ, մինը հրամանատար սահմանադրական բանակի, միւսը աջ բազուկը Դիքտատորի։ Նրանց յաղթանակի ու փառքի ձայնը հասնում էր Նիւրոպա, մեր սրտերն էլ բարձրանում էին, հպարտ էինք մեր ռազմիկներով, որոնց ձեռքում դողում էր հին Իրանը... Եւ երազի պէս սահում էր մեր առջևից ամբողջ արևելեան պատմութիւնը, մեզ թւում էր թէ Նեմեզիդայի մատը կար այդտեղ, թէ Եփրեմի, Քեռիի, Եէչօների այդ յանդուգն ու յաղթական թռիչքներով մի դարաւոր վրէժ էր լուծւում... Պարսկաստանը՝ հին տիրուհուն դեսպոտների, Պարսկաստանը՝ Ցաղկերանների, Շապուհների, Շահաբբասների, հայասպան ու հայակուլ բռնաւորների—այդ տխուր, բռնապետական Պարսկաստանը թաւալւում էր մի բուռն հայ քաջերի ոտքերի տակ...

Այդտեղ է—թւում է ինձ—մեծագոյն խորհուրդը այն պատմական ու յաւէտ կիլոտատակելի օրերի։

Եւ այդ հրաշքը իրականացաւ, շնորհիւ այն կուռ, գաղափարական ընկերակցութեան, որ 25 տարուց ի վեր կուրծք է տալիս բոլոր հողմերին, կուում է և ճարակւում շարունակ, թաղում է անդադար իր ամենաչքեղ պարծանքները, և այնուամենայնիւ, չի սպառւում երբէք հայկական հերոսացանիը, հայ ժողովուրդը իր արիւնոտ արգանդից շարունակում է ծննդաբերել միշտ նոր ու նոր Քեռիներ։

Փառք նրանց, որ գալիս են գեղեցկացնելու մեր ազգային կերպարանքը, փառք ինչ փայլ ու զուարթութիւն հաղորդելու մեր լալկան պատմութեանը։

. . . . . .

Մնաս բարով, քաջ ընկեր։ Այստեղ միայն, գերեզմանի մէջ հանգստութիւն կը վայելեն քո բազմատանջ ոսկորները։ Դնա՛ Նոյիր խաղաղութեամբ քո հոգևոր հայրերի և հինաւուրց զինակիցների մօտ — Դումանի, Զաւարեանի...

Ննջեցէք, մեծ ընկերներ. և թող մեր անսիրտ ճակատագիրը գէթ այժմ հոգայ, որ գալոց սերունդները չապրին այնպէս, ինչպէս դուք ապրեցիք, չճաշակեն այնպէս վիշտն ու տառապանքը, ինչպէս դուք ճաշակեցիք։

Ննջեցէք, վեհ ընկերներ. և թող ձեր ահեղ ուրուականները երբեմն մշտապէս բաղխելու մեր սատմրուկեան դահիճների դռները, երբեմն հասկացնելու այն ոճրանքի զանգերին, որ հայ ժողովուրդը, այնուամենայնիւ, սպանելու ժողովուրդ չէ, որ հայկական դատը, այնուամենայնիւ, պէ՞տք է յաղթանակէ...

Վարանդեանից յետոյ խօսք առաւ տիկնանց կողմից տ. Սոֆիա Դանիելբեգ և փոքրիկ ու զգաւորած ճառ ասաց։ Ապա խօսեց Բագուի պատգամաւորը, Ս. Առարատեան։ Հակիրճ ճառով նա բնորոշեց հանգուցեալ ռազմիկին, և կանգ առաւ պարսկական ազատագրական շարժման մէջ Քեռու կատարած դերի վրայ։ Նա շեշտեց հանգուցեալի մի քանի բնորոշ կողմերը—ժողովրդասէր, ընկերասէր, համեստ ու առաքինի, պահանջկոտ ու արդարացի բնաւորութիւնը և մասնաւորապէս հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրեց հայ մտաւորականների վերաբերմամբ Քեռիի բռնած դիրքի ու աշխարհահայեացքի վրայ։ «Սխալ է միանգամայն այն կարծիքը, թէ Քեռին հալածում էր հայ մտաւորականութիւնը։ Նա հայրական սիրով փայփայում էր այն հայ ինտելիգենտներին, որոնք գործով ու անձնական օրինակով ծառայում էին հասարակ ժողովրդին և հոգու խորքից ատում էր այն բոլորին, որոնք իրենց կրթական ասպիճանով մի նոր բռնապետութիւն ստեղծելու փորձեր էին անում։

Նրանից յետոյ հանդէս եկաւ մի վրացախօս հայ՝ Ե. Առաքելեան Զխարի հայ երիտասարդութեան կողմից և կարգաց վրացերէն լեզուով դամբանական մի ուղերձ։ Նրան հետևեց Առաքելեան Զամայեանը, որ մի քանի խօսքով զբաւեցնելով հանգուցեալին, առաջարկեց կեցցէ՛ դնել հայ ազատութեան ռազմիկներին։ Բարձրանում է կեցցէների մի մրմունջ։ Ապա Անդրանիկն է ծառանում բազմութեան հանդէպ. խօսում է մի քանի վայրկեան յուզուած ու լարուած, նշանակում է կատաղի ոճով թիւրք ու գերման կառավարութիւնը և շեշտում է իր հաւաքը դէպի հայ դատի վերջնական յաղթանակը։

Վերջանում է հանդէսը և հսկայական բազմութիւնը ցրւում է «Կեցցէ՛ Անդրանիկը» կոչելով։

Մ. Ցյուցց

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կարգադրիչ կոմիտէի անունից ստացած են հետևեալ հեռագիրները.

«Ընկաւ Քանկալին ընկերը, բազմատանջ ազգի հաւատարիմ զաւակը։ Ցեմ վստահանում լալ քո մահը, քանի որովհետև իր ժողովրդի ազնիւ մարտիկների համար ուրիշ ճանապարհ չկայ։ Դրօ։

«Այլ ևս չկաս, մեր Քեռի։ Քո մահանապասելի չէր մեզ համար։ Մեզնից շատերն են եղել քեզ հետ կռիւների մէջ, և այն մեր կռիւն էր, որի մէջ չէինք սպասում քո մահը։ Հայկական 2-րդ դրուժինայի խմբապետներ։»

Կարսի Հայկական կոմիտէն հեռագրով խնդրում է մեզ շտկել մի սխալ, որ սպրտել է նոյն կոմիտէի «Հորիզոն»-ի № 117 ում տպած հեռագրի մէջ։ Այս հեռագրի մէջ ասած է, որ կոմիտէն իր միջոցներից լիռուբլի է նշանակել Քեռու անունը դպրոցական կամ մի այլ ֆոնդ կազմելու համար։ Գումարը պէտք է լինի ինգ հարիւր ռուբլի։

Հնարաւորութիւն չունենալով մի առ առ տպագրելու Քեռիի յիշատակին խմբագրութեանս հասցէին ուղղուած ցաւակցական բազմաթիւ հեռագիրներն ու նամակները, մենք տալու ենք միայն նոր հեռագիրների լոկ ցանկը։

Արդէն տպագրուած հեռագիրներից զատ, հեռագրով ցաւակցութիւն են յայտնում՝

Աշտարակից—Մոսկուայի Հայկական կոմիտէի խումբը։

Ղզլարից—Հայկական կոմիտէն։

Երևանից — պահեստի զրուժինայի ամերիկահայ-կամաւորները։

Երևանից—ամերիկահայ կամաւորները։

Էջմիածնից—Վաղարշապատի հայոց եկ.-ծխ. դպրոցի հոգաբարձական և ուսուցչական կազմը։

Բալախանիից—Լեոն Զոհրաբեան և Հայրապետ Տատեան։

Կարսից—Տարոնացի, Ատրունի, Գրիգոր, Տէր-Յովհաննիսեան։

?—Դեօյեան։

Կարսից—Բաղդասարեանների գործակատարներ՝ Սեդրակ, Համբարձում, Շմաւոն։

Նուխուց—Թումանեան, Տոնեան, Աբրահամեան, Մելիք-Այլազիրդեան։

Սարիղամիշից — Հանգուցեալի հին զինուոր Ռուբէն Գրիգորեան Տէր-Աւետիսեան (Վանեցի)։

Ալէքսանդրապոլից—Հալաջեան, Ոսկուլ-Կարօ, Աղան Քեռանդրեան։

Խարկովից—Հայկ Ղազարեան։

Օնիից—Բերուչեան քահանայ։

Բագու—Եղբ. Հայրապետեաններ։

Ալէքսանդրապոլից—Արտաշէս Սուքեանի եղբայրները։

Երևանից—Բաղրամեան։

Կարսից—մի խումբ էրզրումցիներ (Սրանք իրենց մէջ հաւաքել են 300 ռ. Քեռու յիշատակը յաւերժացնելու համար)։

Էջմիածնից—Բաղէոս Յովսէփեան, Տէր-Յակոբեան, Օգաֆրանեան, Բալասանեան, Թարխանեան, Վարդիկեան, Աւշեան, Յակոբեան, Ասլանեան, Գարրիէլեան, Սամուէլեան, Վարդանեան, Յովակեան, Զարգարեան, Գէորգեան, Մանուէլեան, Տէր-Գրիգորեան, Զաքարեան, Բալաչեան, Տէր-Թէոսեան, Տէր-Բաղէոսեան, Գոտոեան, Բգնունի, Կասանեան, Վարդանեան, Սախակլեան, Նաւասարդեան, Բասրանչեան, Ճուղուրեան, Մուշեղեան, Յակոբեան, Գզարեան, Այվազեան, Կեսյեան, Գեսարեան, Շաղոյեան, Աղասեան, Եղիազարեան, Մկրտչեան, Սանասարեան, Սահակեան, Ասկարեան, Արմենակ, Սարգսեան, Թանայակ, Վաչեանի, Անանասիա, Աստղիկ, Լուսին, Մանկիրա, Մակիրա, Արուսեակ, Դանիա, Համասփիւռ, Հենրիկոս, Բարդուղիմէոս, Թամբրէ, Արտաւազդ։

(Շարունակելի)

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊՏՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԳԵՐ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԾՏԱՐԻՑ

28 մայիսի

Գերագոյն Հրամանատար Թագաւոր Կայսրը երեկ հետևեալ հեռագիրը ստացաւ Ֆրանսիական հասարակապետութեան նախագահից. «Ռուսաստանի տարած փառաւոր յաղթութիւնը դաշնակից շտաբների գծած միասնական գործողութիւններին հզօր զարկ է տալիս ընդհանուր աջողութեան։ Այն միջոցին, երբ Վերդենի առջև ֆրանսիական զօրքերը անդրդուելի քաջութեամբ յետ են մղում գերմանացիների կրկնակի յարձակումները, Զերդ Մեծութեան ռուս զինուորները արիւնալի հարուած են տալիս մեր թշնամիներին։ Ֆրանսիան Քրիստոս ուրախութիւնից, այդ բաղդաւոր տեղեկութիւնը որ առաւ, և հայտնում եմ Զերդ Մեծութեանը ընդունել յանձինս Ձեր և Ձեր բանակի իմ ջերմագին շնորհաւորանքները։ Ռայմոնդ Գուանկարէ։»

Արեւմտեան ճակատ.—Գեներ. Բրուսիլովի զօրքերը շարունակում

ն յարձակումը և հետապնդումը Շնամուն։ Կռիւներ վարելով Թշնամու վերջապահ զօրքերի հետ, մեր զօրքերն անցնում են Սարի գեղից, Լուցկից ինչպէս ներքև, այնպէս և վերև։ Արդէն գետն անցած զօրամասերը հետապնդում են Թշնամուն, որը փորձում էր դիմադրել Թիկունքի դիրքերում։ Գալիցիայում, Տարնոպոլից դէպի հիւսիս-արևմուտք, Գլեադկիի և Ցեբրովի շրջաններում, տաք կռիւ է տեղի ունենում մի քանի անգամ ձեռքից ձեռք անցած բարձունքների համար։ Բելգիական զրահապատ մեքենաները հզօր աջակցութիւն են ցոյց տալիս մեր զօրքերին։ Ներքին Սարիպայի շրջանում Թշնամու ճակատը պատռելն այն հետևանքն ունեցաւ, որ մենք տիրեցինք ամրացրած դիրքին Սարիպայի արևելեան ափին։ Այսօր, մայիսի 28-ին, ուսադէմին, մեր զօրքերը մտան Բուչաչ քաղաքը և, ծաւալելով յարձակումը Դնեստրի երկարութեամբ, գրաւեցին Սցեանկա գիւղը։ Գոտոկ Զլոտի գիւղում մեր ձեռքն ընկաւ արտիլերիական մի մեծ պահեստ հրանօթներով և փամփուշտներով։ Յարձակումը շարունակւում է։ Երեկոյ կռիւներում նորից գերի է վերցուած 97 սպայ և մօտ 5,500 գերի և խլուած է 11 թնդանօթ։ Ընդամենը գործողութիւնների ընթացքում այժմ վերցուած է գերի ցուցակագրուած 1.240 սպայ և մօտ 71,000 զինուոր և խլուած է 94 թնդանօթ, 167 գնդացիր և 53 ռմբաձիգ։ Բացի սրանից, վերցուած է ռազմական ուրիշ շատ աւար։ Բլինա գետի ճակատում շատ տեղերում թնդանօթամարտ է տեղի ունենում։ Մայիսի լոյս 27-ի դիրքը գերմանական արտիլերիան ուժեղ կրակ էր բացել թնդանօթերից և ռմբաձիգներից։ Սմորգոնից դէպի հարաւ Թշնամին մի անգամ փորձեց մօտենալ մեր խրամատներին, բայց յետ շրջեց մեր կրակով։ Օգինի ջրանցքի վրայ տեղ-տեղ հուն հրացանի կռիւ էր տեղի ունենում։

Կովկասեան ճակատ.—Տրապիզոնի շրջանում մեր զօրամասերը յետ մղեցին Թշնամուն Պատանա գաղթից դէպի արևմուտք գտնուած դիրքից։ Թիւրքերի հակայարձակումը յետ մղեց նրանց համար մեծ կորուստներով։

29 մայիսի

Արեւմտեան ճակատ.—Հատ ըստացուած զեկոյցների, մեր զօրքերի յարձակումը Վոլինում, Գալիցիայում և Բուքովինայում երեկ շարունակւում էր նոր պիտոյութիւններով։ Թշնամու բանակները շարունակում են անագին կորուստներ կրել, հաշուելով նոյն իսկ միմիայն գերիները։ Մեր զօրքերի խիզախ հարուածները մեր ձեռքն են տալիս նոր հազարաւոր գերիներ և ամենաբազմազան ռազմական աւարներ, որոնց քանակը ներկայումս նոյն իսկ անկարելի է քիչ թէ շատ ճշգրիտ հաշուել։ Այսպէս, օրինակ, Թշնամուց խլուած դիրքերի մի մասում մենք վերցրել ենք 21 լուսարձակ, պաշարակիր սայլերի 2 խումբ, 29 խոնանոց, գնդացիրային երկանիւ 47 սայլ, 12,000 պուդ փշածածկ երկաթալար, բետոնի 1000 գերան, բետոնի 7 միլիոն կուբ, 10,000 պուդ ածուխ, զինանիւթի ահագին մթերանոցներ, ահագին քանակութեամբ զէնք, ռազմանիւթ և պարագաներ։ Մի ուրանագան պարագաներ։ Ենք գրի մասում մենք վերցրել ենք բացանի 300,000 փամփուշտ, 100 արկղիկ գնդացիրային ժապաւէններ, 200 արկղ ձեռնումբ, 1000 չփչացրած հրացան, 4 գնդացիր, թնդանօթային 2 հեռաչափ և Նորտոնեան մէկ ջրհոր (շարժական ջրհոր խմելու ջուր հանելու համար)։ Զանազան կառուցումների համար Թշնամու պատրաստած ահագին քանակութեամբ նիւթերէն զաւթումը ինքնին մեծ ինքեան ցոյց է տալիս, որ մեր հարուածը ժամանակին էր։ Մեր հարուածը մեր թշնամուն ստիպեց կռիւներում նորից գերի թողնել։ Բերեկայ կռիւներում նորից գերի է վերցուած 409 սպայ, 1 գեներալ, 30 թնդանօթ, 13 գնդացիր, 5 ռմբաձիգ։ Գիշերով գործողութիւնների ընթացքում ընդհանուր առմամբ վերցուած է առայժմ՝ 1 գեներալ, 106,000 սպայ, աւելի քան 180 գնդացիր և 58 ռմբաձիգ։ Առանձին դէպքերից և միջադէպերից ակնայայտ են հետևեալները։

Մեր նորակազմ զօրամասերից մէկի խիզախ կռիւը Ռուժիշչեի մօտ (Սարիպի վրայ, Լուցկից ներքև)։ Այստեղ գերմանացիները փորձում էին օգնել աւստրիացիներին յարձակում գործելով մեր հետևակ զօրքի դէմ ծանր արտիլերիայի կրակի պաշտպանութեան տակ, բայց դուրս քշեցին աւանից, գերի տալով աւելի քան 2000 հոգի և կորցնելով 2 թնդանօթ ու գնդացիրներ։ Մեր զօրքերը հետապնդում են նահանջ տուող գերմանացիներին։ Դուբնո քաղաքի շրջանում գործող զօրքերը, յետ մղելով Թշնամուն, վերցրին Դուբնո քաղաքը և մարտկոցը։ Մի քանի զօրամասեր անցել են Իկւա գետը և ծաւալում են հետապնդումը։ Նրանց մի մասը գրաւել է Դեմիդովկա գիւղի շրջանը, Մլինով — Բերդոտեչնո խճուղու վրայ։ Մլինով յենակէտի Թշնամու բերդապատ զօրքը ստիպուած էր անձնատուր լինել։ Բուչաչից դէպի հիւսիս Թշնամուն իր գլխաւոր դիրքից դուրս քշելիս վերցուած են շատ գերիներ, դրանց թւում աւստրիական մի բատալիոնի ըշտաբը, և մեծ քանակութեամբ զէնք։ Թշնամին շպրտուած է Սարիպա գետը։ Օսովեցի մօտ (Բուչաչից դէպի հիւսիս) գնդերից մէկը խլեց մի ամբողջ թնդանօթաչուքը բաղկացած 10-սանտիմենտրանոց 4 գաւաբեցից։ Զնայելով Թշնամու յուսահատական դիմադրութեան և ոչ միայն ճակատից, այլ և նոյն իսկ Թիկունքից զարնող թնդանօթների կրակին և ստորերկրեայ ականների պայթիւններին, Թշնամու դիրքերը Դորբոնովդչի հարաւային կողմը (Զերնովիցից 30 վերստ հեռու դէպի հիւսիս-արևելք) վերցուած են գեն. Լեչիցկու զօրքերով։ Միմիայն այս շրջանում մենք գերի ենք վերցրել 18,000 զինուոր, 1 գեներալ, 347 սպայ և խլել 10 թնդանօթ։ Զեկուցման առաքման րոպէին գերիները շարունակում էին դալ մեծ խմբերով։ Զալեշչիկից դէպի հարաւ-արևելք վճռական հարուածով Թշնամին ստիպուած և յետ է քաշւում։ Իւրկուց կայարանը պայթեցրած է Թշնամու կողմից։ Թերիցիները ձի նստած յարձակում գործեցին նահանջ տուող Թշնամու վրայ, այդ նահանջը անկարգ փախուստ դարձնելով։ Ջանալով ուղղել ստեղծուած դրութիւնը, Թշնամին շատ տեղերում կատաղի հակայարձակման դիմեց։ Այսպէս, մայիսի 28-ի լուսադէմին Սեօմկի շրջանում (Կոլկիից դէպի արևելք) Թշնամու գերազանց ոյժեր յարձակում գործեցին մեր առաջ անցած զօրամասերի վրայ և արտիլերիայի կենտրոնացած կրակի աջակցութեամբ յետ մղեցին նրան Սարի գետի աջ ափը։ բայց այդ յարձակման յետադայ ծաւալումը մենք նոյն օրնեռ դադարեցրինք։ Թշնամին խիստ մեծ յամառութիւն է ցոյց տալիս Տորգովիցի շրջանում (Սարի գետի վրայ, Լուցկից վերև), ուր կատաղի կռիւ է եռում։ Մեր զօրքերի մայիսի 22-ից մինչև 28-ը անընդհատ տուած կատաղի հարուածների ընդհանուր հետևանքները տալիս են Գոլեսէի շրջանից մինչև ռումինական սահմանը կռիւ վարող մեր բոլոր բանակների ճակատների դէմ Թշնամու ամբացրած դիրքի պատռման պատկերը։

Կովկասեան ճակատ.—Թիւրքերը կրկնակ յարձակումներ գործեցին մեր դիրքերի դէմ Գլատանայից, բայց յետ մղուեցին մեծ կորուստներով։ Մեր խրամատների առջև ընկած են Թշնամու հարիւրաւոր դիակներ։ Գիւմուշխանէի ուղղութեամբ մեր զօրամասերը գրաւեցին Թշնամու խրամատների առաջին գիծը։ Դիարբէքիրի ուղղութեամբ մեր զօրքերն առաջ անցան, վերցնելով գերիներ և ռումբերի արկղներ։

—

ՊԱՐԻԶ, 27 մայիսի.—Թագաւոր Կայսրը հեռագրով պատասխանեց նախագահ Պուանկարէին հեռաւելը։

«Վատահելով մեր հակառակորդին և յաղթանակը տանելու մեր անկուն կամքին, ես հաստատապէս յոյս ունիմ, որ կրած կորուստները ապարդիւն չեն անցնելու և Ֆրանսիայի ու Ռուսաստանի անխոնջ ջանքերը, որոնք սերտօրէն կապուած են քաջարի դաշնակիցների հետ, չեն վրիպիլ յաղթանակ բերելու ընդհանուր Թշնամուս, ինչպէս և ամբողջ Ռուսաստանը, հիացումով եմ հետևում

Վերդենի պաշտպանների վեհ հերոսութեան և ջերմ ժողովրդի ուղարկում ֆրանսիական զէնքի վերջնական աջողութեան համար»։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԹԵՀՐԱՆ, 27 մայիսի.—Ռեանդուզի մօտ հերոսական մահով ընկած հայկական դրուժինայի առաջնորդ, հայոց ազգային հերոս Քեռի-խանի յիշատակին հոգեհանգիստ կատարուեց հայոց դպրոցում, ապա տեղի ունեցաւ հայկական կոմիտէի հանդիսաւոր նիստ հերոսին նուիրուած։ Ներկայ էին դաշնակից միսսիաների ներկայացուցիչները և պարսից մինիստրները։

Այսօր զինուորական դատ է սկսւում պարսից ցեղերի ղեկավարներից նրանց դէմ, որոնք անցեալ տարի անցել էին Գերմանիայի և Թիւրքիայի կողմը և որոնց պարսից իշխանութիւններին աջողուել էր բռնել։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՐԵՍ

ՊԱՐԻԶ, 19 մայիսի. — Երեկոյեան հաղորդագրութիւն։ Վերդենից հիւսիս ճակատում շարունակւում էր չափազանց եռանդուն թնդանօթամարտ։ Մաս գետի երկու ափերին։ Ցերեկայ ընթացքում հետևակազօրքի գործողութիւններ չեղան։ Մեր մարտկոցները ռմբակոծում էին Թշնամու զօրամասերը Դուոմոն գիւղից դէպի հիւսիս։

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՀՌՈՄ, 27 մայիսի.—Հաղորդագրութիւն գլխաւոր շտաբի. Երեկ, Թշնամին նոր ահագին օգնական ոյժ ստանալով, արտիլերիական ուժեղ նախապատրաստութիւնից յետոյ, որին մասնակցում էին բազմաթիւ մարտկոցներ, սկսեց գրոհներ տալ Ազիագոյից և Կամպո-Մալոից դէպի արևելք շրջանում։ Ալպեան հրացանաձիգներն ու հետևակազօրքը մի քանի անգամ վանեցին յարձակւող Թշնամու զօրամասերը և իրենք քաջաբար դիմեցին հակայարձակումների. սակայն ցերեկւայ վերջին, մեր զօրքերը, խուսափելու համար Թշնամու արտիլերիական կրակի անընդհատ գործունէութիւնից, դէպի նոր դիրքեր նահանջեցին, որոնք գտնւում են նախորդներից մի քանի հարիւր մետր դէպի արևելք։

ՀՌՈՄ, 28 մայ.—Հաղորդագրութիւն գլխաւոր շտաբի։ Մայիսի 26-ին կրած ծանր անաջողութիւններից և խոշոր կորուստներից յետոյ, Թշնամին երեկ սահմանափակեց մեր դիրքերի թոյլ ռմբակոծումով։ Ընդհակառակը, մեր զօրքերը ճակատի մի քանի կէտերում հակայարձակումներ գործեցին, դրանով հրապարակ քաշելով Թշնամու զօրքի մեծ մասսաները, որոնց մեր մարտկոցներն աջողակօս ռմբակոծում էին։ Մենք մի քիչ առաջ անցանք վերին Վալիարսում, Մոնդենովեգո ճակատամարտում, Գոգինա լեռնային վանքի մօտ, Ասոիկոի հովտում և Մոնտեչենոգոի արևմտեան լանջերում։ Բոյատի և Անսիայի լեռնային հովիտներում մեր զօրքերը շարունակեցին անընդհատ առաջանալ։

ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 27 մայիսի.—Ժուրժևից հաղորդում են. Բոլգարական զինուորական իշխանութիւնները Ռուչչուկում մայիսի 20-ի առաւօտեան ծանուցին ռումինական հիւպատոսին, որ Ռուչչուկում բոլգարական նաւահանգիստն ու սահմանը գոցած են Ռումինիայի ուղևորների և ապրանքների երթևեկի համար, մինչև նոր տնօրինութիւն։

ՍՈՖԻՈՒՆ, 28 մայիսի.—Ֆրանսիական ծովակալութեան կարգադրութեամբ Թեսալոնիկում է յունական տերբիտարիալ ջրերում նաւային երթևեկը, անգլիական ծովային կանոնների համաձայն, ափից երեք մղոն հեռու շրջանում։ Ոչ մի յունական շոգենաւի չէ թոյլատրւում գնալ Կաւալա և նրա շրջակայքը։

ԾՈՎԻ ՎՐԱՑ

ՀՌՈՄ, 27 մայիսի. — Դուբացցո նաւամատոյցում ականով ընկղմեց Թշնամու մի բեռնատար շոգենաւը։

ԼՈՆԴՈՆ, 28 մայիսի.—Պաշտօնապէս հաղորդւում է. հինգշաբթի առաւօտեան մոնիտորների և հակառակնակիրների մի նաւաբաժին Զէբբրիգէի ափերում կռիւ բռնեց Թշնամու հակառակնաւերի հետ։ Վերջինները հրաժարութեան ենթարկւելով պահեցան հաւանգատում։ Մեր կողմից ոչ մի կորուստ և ոչ մի թաս չկայ։

ՀՌՈՎՄ, 28 մայիսի.—Սաեֆանիի գործակալութիւնը հաղորդում է. Երեկ երեկոյ Թշնամու երկու սուզանաւեր Ադրիատիկ ծովի ստորին մասում յարձակեցան մեր ծովային տրանսպորտի վրայ, որ բաղկանում էր զօրք և ռազմանիւթ տանող երեք շոգենաւերից հակառակնակների մի բաժնից։ Թէև սուզանաւերը շուտով յարձակման ենթարկւեցին, սակայն նրանց յաջողւեց ականներ բաց թողնել, որոնցից մէկը հանդիպեց «Գրինչիպէ Ումբերտո» շոգենաւին, որ ընկղմւեց մի քանի րոպէից, չնայած նաւի ազատարար միջոցներին և ուրիշ նաւերից շտապ օգնութեան, կորուստները դեռ չպարզւեցին, սակայն հաւանաբար հասնում են նաւի վրայ գտնւող զօրքերի թւին կէսին։

ԼՈՆԴՈՆ, 23 մայիսի.—Ծովակալութիւնը հրատարակեց Մեծ նաւատորմիղի հետևեալ հաղորդագրութիւն. Այժմ հաստատւած է, որ «Հեմպշայր» յածանաւը անցած երկուշաբթի երեկոյեան ժամը մօտ 8-ին ականի զարնուեց։ Յածանաւին ընկերակցում էին երկու հակառակնանաւեր մինչև այն րոպէն, երբ չափազանց ուժեղ ալեկոծութեան պատճառով նրա հրամանատարը ստիպւեց նրանց յետ դրկել։ Երեկոյեան ժամը 7-ին։ Կենդանի մնացածների ցուցմունքներից երևում է, որ պայթիւնը տեղի է ունեցել երեկոյեան ժամը 8-ին և յածանաւը 10 րոպէում ընկղմւել է։ Նաւի ընկղմւելու լուրը ստացւելուն պէս դէպքի վայրն ուղարկւեց հակառակնակիրների և պահակնաւերի մի նաւաբաժին, իսկ առանձին պահակախմբեր ուղարկւեցին աւտոմոբիլների վրայ ափի երկարութեամբ։ Ինչպէս հաղորդւում են, ափից երևում էր, որ յածանաւից վայր են ձգւել 4 նաւակներ։ Օգնութեան ուղարկւած բոլոր նաւերին հրամայւած էր որոնել այդ նաւակներն ու նրանց օգնութիւն հասցնել։ Չնայած ձեռք առնւած միջոցներին, նաւատորմիղի հրամանատարը մեծ ցաւով ստիպւած է եզրակացնել, որ նաւակները քամուց քշւելով խիստ հեռու են ափի վրայ։ Այդ կերպով, բացի լաստերի վրայ ափ հանւած 12 ողջ մնացածներից, այլևս յոյս չկայ, որ ուրիշներ ողջ մնացած լինեն։

ՉԻՆԱՍՏԱՆ

ՏՈԿԻՈ, 27 մայիսի. — Զրոյցների համաձայն, մինիստրական խորհուրդը վճռել է ուժեղացնել Գեկինի պահակախմբի զօրամասը՝ նոր զօրամասերը դրկելով Նագոնիայից։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԼՈՆԴՈՆ, 27 մայիսի.— Այս առաւօտ Լանդոնում կայացաւ կարևոր խորհրդակցութիւն, որին ներկայ էին Ասքիթը, Կամբոնը, Գրէյը, Լլոյդ Զորջը և զինուորական խորհրդի անդամները։

ՋԻՆԱԳՈ, 28 մայիսի. — Հանրապետական Կոնվենտում Միացեալ-Նահանգների նախագահական թեկնածուի քւէարկութիւնները տուին հետևեալ արդիւնքը. Եուզը ստացաւ 258 քւէ, Վիկսը՝ 105, Ռուտը՝ 103, Կումմինսը՝ 82, Բորտոնը՝ 77, Ֆեբրանկսը՝ 74, Ռուզվելտը՝ 65։ Երկրորդ քւէարկութեամբ Եուզը 328, Ռուտը՝ 98, Ֆեբրանկսը՝ 88, Կումմինսը՝ 85, Ռուզվելտը՝ 81, Վիկսը՝ 79, Բորտոնը՝ 75, Շիրմանը՝ 65։ Նախագահի պաշտօնին հանրապետական Կոնվենտի կողմից թեկնածու նշանակելու համար պէտք է ստանալ 493 քւէ։

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 29 մայիսի.—Նախագահ Վիլսոնն ընդունեց Եուզի հրաժարականը գերագոյն դատարանի դատաւորի պաշտօնից։ Ընդունելով հանրապետական կուսակցութեան հրաւէրը նախագահական թեկնածու լինելու համար, Եուզը հեռագրեց, որ կողմնակից է ամերիկեան քաղաքացիների իրաւունքների ուժեղ պաշտպանութեան ցամաքի և ծովի վրայ և կատարելապէս հաւանութիւն է յայտնում ռազմական պարապմունքների ծրագրին։

ՊԱՐԻԶ, 28 մայիսի.— Ալֆոնս թագաւորը յանձնարարեց Վիվիանիի պատնական դեսպանին՝ խնդրամատոյց լինել Ֆրանց-Յովսէփ կայսեր, որ վերջինս մահուան դատապարտած Կրամարժի, Զերուինկայի, Զամազոլի և ուրիշների պատիժը թեթևացնի։

„ՀՈՐԻԶՈՆԻ" ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

Ռոստով, 25 մայիսի

(Հեռագրով, ստացած է մայիսի 28-ին)

Կիրակի օրը հանդիսաւոր հոգեհանգիստներ են նշանակւած Կիշինեւի համար։

Զալխուտեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ*)

II

Սպառողական խանութ բաց անելու համար անհրաժեշտ է իմանալ սպառողների ընկերութեան կանոնադրութեան հիմնական կէտերը։

Տպագրւած կանոնադրութեան մէջ գրւած է, որ իւրաքանչիւր սպառողական ընկերութիւն հիմնւում է նրա համար, որպէս զի հնարաւորութիւն տրւի սպառողներին գնելու իր խանութից լաւ յատկութեամբ ապրանք, որքան հնարաւոր է էժան գնով, և նրա անդամների համար խնայողութիւն անել ընկերութեան օգուտներից։ Ապրանքներ պատրաստելու, պահելու և վաճառելու համար ընկերութիւնը կարող է հիմնել անհրաժեշտ պահեստներ և այլն։ Եթէ սպառողական խանութ բաց անելու ցանկութիւն ունեցողների թիւը կը հասնի ոչ պակաս քան 20-ի՝ հարկաւոր է կանոնադրութեան երկու տպագրւած օրինակների մէջ նշանակել, թէ որ գիւղում, աւանում, քաղաքում կամ շրջանում է հիմնւում սպառողների խանութը։ Ներմուծել պէտք է նաև այն, թէ որքան անդամակցական վճար (օրինակ 50-ական կոպ.) և ինչպիսի բաժնեվճար — փայ (1-ից մինչև 10 ռուբ.) տպագայ ընկերութիւնը ցանկանում է նշանակել իր անդամների համար։ Նշանակել պէտք է, թէ բոլոր անդամների մի մասը պէտք է ներկայ լինի ժողովներին, օրինական համարելու համար,—օրինակ՝ կէսը կամ քառորդը, նայած թէ որը ցանկալի է համարում կանոնադրութեան այդ տպագրւած օրինակներին ստորագրող հիմնադիրները։ Անհրաժեշտ է նշանակել, թէ ընկերութեան ապագայ վարչութիւնը՝ քանի՞ անդամից պէտք է կազմւած լինի—երկու թէ աւելի։ Նոր սպառողական ընկերութիւն թոյլ տալու վերաբերեալ նահանգապետի անունով տրւած խնդրի տակ պէտք է ստորագրեն նոյնպէս բոլոր հիմնադիրները և ստորագրւած կանոնադրութեան հետ միասին պէտք է ուղարկեն նահանգապետին՝ ապահովւած նամակով նահանգական քաղաք։ Երբ ոստիկանութիւնից կը ստացւի թոյլատւութիւն, հիմնադիր անդամները և ընկերութեանը միանալու ցանկութիւն յայտնողները (արդէն խնդիրը ներկայացնելուց յետոյ) ընդհանուր ժողով կը գումարեն և կընտրեն նախագահ և քարտուղար։

Այնուհետև կընտրեն ընկերութեան վարչութեան անդամներ և վերատեսուչ յանձնաժողով։ Ընտրութիւնները պէտք է տեղի ունենան գաղտնի ձայնաւորութեամբ։

Վարչութիւնը վարում է սպառողական խանութի գործերը. ընդունում է անդամավճարները, փոխարինաբար վերցնում է խանութի համար անհրաժեշտ գումար, գնում և տեղաւորում է խանութում ապրանքները, ապրանքներին գին է նշանակում, հետևում է վարձով գործակատարների վրայ, և այլն։ Վարչութեան բոլոր պարտականութիւնների մասին յիշւած են կանոնադրութեան մէջ։ Վարչութեան անդամ ընտրել չի կարելի նրանց, ովքեր ընկերութեանը վճառում են իրենց ապրանքները, և նրանց, ովքեր նոյնպիսի առևտրով են պարապում։ Բոլոր անդամների ժողովը կամ ինքը վարչութիւնը բաշխում, որոշում է վարչութեան անդամների պարտականութիւնները. մէկը նրանցից վարչութեան նախագահ է լինում, միւսը՝ կառավարում է սպառողական խանութը, 'երրորդը՝ գրամական մասի հսկողը, աւելի հիշը գանձապահն է։ չորրորդը՝ ընկերութեան հաշուապահական մասը և գրագրութիւններն է կատարում և այլն։ Վարչութիւնը հաւաքւում է գործերի համար շաբաթական մի-մի անգամ։ Վարչութեան անդամների կէսից ոչ պակասի ներկայութեամբ պէտք է յանձնւեն գործակատարին գնած ապրանքը և ապրանքներին գին նշանակեն։ Գանձապահը և գործակատարը վարձւելիս գրաւոր պայման են կազմում վարչութեան հետ և պէտք է գրաւական ներկայացնեն, որ համապատասխան լինի ընդհանուր ժողովի որոշածին։ Խանութում գրւած է պէտք է լինի յատուկ մի մատեան, որի մէջ անբաւական անդամները արձանագրում են իրենց գժգոհութեան պատճառները։ Խանութի հաշուապահութիւնը պէտք է տարւի կանոնաւոր։ Ընկերութեան բացման ժամանակ աւելի լաւ է հրաւիրել հաշուապահ, որը առանձին և յատուկ մատեաններով պէտք է վարէ հաշիւները և ցոյց տայ, թէ ինչպէս պէտք է տանել այդ։ Իւրաքանչիւր ընկերութիւն պատուիրում է իրեն համար սեփական կնիք, որ անհրաժեշտ է մուրհակներ, պայմանագրեր, ստորագրութիւններ և պոստից ընկերութեան կամ վարչութեան անունով դրամ, ապահովւած գրութիւններ և փաթեթներ ստանալու դէպքում։ Առանց վճարի առևտուր անելու (на право безплатной торговли) վկայագիր ստանալու համար հարկաւոր է պաստով մի խնդիր ուղարկել արքունական պալատը։ Սպառողական խանութում ձրի առևտուր անել կարելի է միայն այն ժամանակ, եթէ նրա բաժնեվճարներից ստացւած գումարն ամբողջ հազար ռուբլուց պակաս է։ Ընկերութեան անդամների համար խանութից ապրանք են բաց թողնում նաև պարտքով այնքան գումարով, որ որոշել է նախօրօք բոլոր անդամների ժողովը, օրինակ բաժնեվճարի կէսի չափ։ Ոչ անդամներին պարտքով ապրանք բաց թողնել չի կարելի։ Ով անդամ չէ, նշանակում է այդպիսին չի ցանկանում մասնակցել խանութի գործերին, այդ պատճառով էլ դրկւում է կրեդիտից։

Գ. Ղ.

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական ընկերութիւնը վերջին օրերս 12 վագոն երկրագործական գործիքներ է ուղարկել Վանի փախստական երկրագործների համար։ Նոյն միութեան նախագահ Աւ. Սահակեանը մեկնում է Վան, երկրագործական աշխատանքների հետ ծանօթանալու համար։

◆ Մոսկուայի կոմիտէի երրորդ թաղեկ խումբը Մուշից Աշտարակ է փոխադրել 175 որբեր - որբուհիներ։ Մուշում բացել է ժամանակաւոր որբանոց - ապաստարան, որտեղ ամեն կողմերից պիտի հաւաքեն փախստական որբերը և բաժանեն զանազան կազմակերպութիւնների և ընկերութիւնների որբանոցներին։

◆ Փախստական որբերի մայրերից մի քանիսը եկան մեր խմբագրատունը և խիստ կերպով բողոքեցին Թիֆլիսի Թալիբեանի որբանոցի խնամակալութեան դէմ, շեշտելով այն փաստը, որ որբերը քաղցած են Մուշ, կեղտի մէջ կորած են և որբանոցի ծառաների ու աղախինների պաշտօնը իրենք են կատարում, մի բան, որ երեխաների ուժից վեր է։ Դեռ շատ ցաւալի փաստեր կան, որոնց հրապարակելը դեռ վաղաժամ է։ Որբանոցի անօրէնութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում այս իրողութեան վրայ։

◆ Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական ընկերութիւնը ստացել է բժշկական բոյսեր հաւաքելու գործը կազմակերպող Կովկասեան լիազօր Ռոլլովից 100 օրինակ հայերէն լեզուով հրահանգներ, թէ ինչպէս հաւաքել հանանելի բժշկական բոյսերը. սալիպ, փշանենոր (хурмань), կատուախոտ, բիլլուռ, սենդորայակ և սալոն։

◆ Թիֆլիսի ժողովարանում բացուել է նկարիչ Գ. Բաշինջաղեանի, աւելի քան 45 նկարների ցուցահանդէսը։

◆ Վրաց ազգ զրագիտութիւն տարածող ընկերութիւնը հիւղեր է բաց

*) Տես «Հորիզոն», № 117.

digitised by A.R.A.R.@

անում Զոխատուրիում և Օզուրգէթում։

◆ Սերովբէ Սահակեան Կիւլպենկեանը ի յիշատակ իր հանգուցեալ մայր՝ Վարդուհի Կարապետեան Կիւլպենկեանի՝ նվիրել է ճաշի փոխարէն հարիւրական ռուբլի հետևեալ հաստատութիւններին— Զրի և էժանագին ճաշարանին, Տիգրան Նազարեանի «Հարստատ» ճաշարանին, Միրանսուր վանքի որբանոցներին և Գայիանեան զգրանոցի սեղանատանը։

◆ Վերջին օրերս քաղաքային հիւանդանոցներն են մտել հետևեալ հայ վիրաւոր և հիւանդ սպաները. Ս. Մ. Շահնազ և Ե. Զ. Զաքարեանց։

◆ Վերջերս ոստիկանատները բողոքներ են ստանում, որոնցմով պարզուում է, որ առևտրականները սկսել են կշեռքի քաշն անգամ կեղծել. այսպէս օրինակ, 5 փթանոց կենսամթերքի փոխարէն տալիս են 4 և կէս կամ 4 երեք քառորդ փ.։

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

1916 թ. ապրիլի 2-ին Թիֆլիսի Նահանգապետի կողմից հաստատուած է Թիֆլիսի Նահանգի ժողովրդական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների միութեան կանոնագրութիւնը։

Միութեան նպատակն է. ուսուցիչ-ուսուցչուհիների նիւթական դրութեան բարելաւումը, նրանց հոգեկան պահանջներին բաւարարութիւն տալը, գիտական և մանկավարժական ասպարէզում միութեան անդամների սերտ գործակցութիւնը։

Այդ նպատակներին հասնելու համար միութեան իրաւունք է տրուում անդրծ ուսուցիչների համար զբաղմունք գտնելու, աշխատանքի անընդունակ անդամների համար ապաստարաններ, հիւանդների համար սանատորիաներ հիմնելու, փոխադարձ օգնութեան դրամարկղները բաց անելու, միութեան անդամներին բժշկական և իրաւաբանական օգնութիւն հասցնելու, միութեան անդամների զաւակների համար հանրակացարաններ բանալու, նպաստներ տալու նրանց, հանրակրթական և մասնագիտական դասընթացներ, էքսկուրսիաներ, գիտական առաքումներ և համագումարներ կազմակերպելու, գրադարան ընթերցարաններ և գրապահեստներ հիմնելու և այլն։

Միութիւնը իրաւունք ունի գաւառներում հիւղեր ունենալու։

Միութեան անդամներ կարող են լինել բոլոր տեսակի տարրական ժողովրդական դպրոցների թէ ներկայ և թէ նախկին ուսուցիչ-ուսուցչուհիները առանց ազգի և դաւանանքի խտրութեան։

Միութեան առաջին հիմնադիր ժողովը նշանակուած է յունիսի 5-ին ժամը 12-ին Զուբալովի անուան ժողովրդական տանը։

Ընդհանուր ժողովի օրակարգն է.

1. Ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի ընտրութիւնները։

2. Կազմակերպիչ բիւրոի նախագահի զեկուցումը միութեան առաջիկայ գործունէութեան խնդիրների և ծրագրի մասին։

3. Ընդհանուր ժողովին մասնակցողների զեկուցումներ և մտքերի փոխանակութիւն մանկավարժական զանազան հարցերի շուրջը։

4. Զանազան կուլտուրական ընկերութիւնների և հիմնարկութիւնների ներկայացուցիչների շնորհաւորանքներ։

5. Գաւառաւոր և իսկական անդամների ընդունելութիւն։

6. Նախագահի, վարչութեան անդամների և վերատեսուչ յանձնաժողովի անդամների ընտրութիւն։

Դաւառացի ուսուցիչ-ուսուցչուհիներին տրուելու է ձրի բնակարան և ինքնաեռ։ Համաժողովի բոլոր անդամներին կը տրուին ձրի տոմսեր, որով նրանք հնարաւորութիւն կունենան երթևեկելու քաղաքային էլեքտրաքարշի վագոններով։

Համաժողովի անդամների և մասնակցողների համար կը կազմակերպուեն էքսկուրսիաներ քաղաքի աչքի ընկնող հիմնարկութիւնների և վայրերի հետ ծանօթանալու համար։

Դասախօսութիւններ են լինելու զանազան մանկավարժական և հանրակրթական հարցերի շուրջը։

Ովքեր որ կը ցանկանան անդամագրուել միութեանը և ներկայ լինել ընդհանուր ժողովների նիստերին, իրենց պատրաստակամութիւնը պիտի յայտնեն կազմակերպիչ բիւրոին այս հասցէով՝ Тифлисъ, Дворцовая 5, Կազմակերպիչ բիւրոին։

Թիֆլիսի միւս հայկական լրագիրներին խնդրւում է արտատպել այս ծանուցումը։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

«Рус. Вѣд.»-ին Բուխարեստից հեռագրում են. Բոլգարները դաւանանութեան մեղադրանքով պատասխանատուութեան են ենթարկել հայ քաղաքական նշանաւոր գործիչ Գայզիդեանին(?), որը բազմիցս հանդէս է եկել եւրոպական քաղաքական կենտրոններում ի պաշտպանութիւն հայերի։ Գայզիդեանը մեղադրւում է այն բանում, որ նա թողել է իր ծառայութիւնը ֆրանսիական նաւատորմիղի մէջ և ծառայութեան մտել բոլգարների մօտ, որպէսզի պետական գաղտնիքները յայտնի դաշնակիցներին։

— Սեաստապոլից, հեղինակաւոր աղբիւրներից հաղորդում են, որ մայիսի 22-ին թշնամու մի սուզանաւ յարձակում է գործել Տրապիզոնի մօտ կանգնած ռուսաց նաւերի վրայ։ Սուզանաւը հեռաւոր տարածութիւնից միքանի ական է բաց թողել, բայց անաջող, որից յետոյ անյայտացել է, վախենալով ռուսաց նաւերի հետապնդումից։

— „Рус. Вѣд."-ին Պարիզից հաղորդում են, որ յոյներին աջողուել է փոխառութիւն կնքել իբր թէ ամերիկեան բանկիրներից, բայց իսկապէս գերմանացիներից։ Կարծում են, որ գերմանացիները ձգտում են նոյնպիսի ֆինանսական և տնտեսական գերիշխանութիւն հաստատել Յունաստանի վրայ, որպիսին ունին արդէն Բոլգարիայում։

— Հաղորդւած էր, որ յունաց կառավարութիւնը մտադիր է պաշարողական դրութիւն յայտարարել և ձերբակալել Վենիզելոսին։ Այս առթիւ Պետրոգրադի դիւանագիտական շրջաններում յայտարարում են, որ եթէ Յունաստանն իսկապէս նոյդպիսի մի բան անի, այդ արդէն բաւական կը լինի, որ դաշնակիցները նրան համարեն Գերմանիայի կողմն անցած։

— Դաշնակից պետութիւնների դեսպաններին Սալոնիկում խիստ մեծ լիազօրութիւններ են տրուած։ Այն հանդամանքը, որ գեներալ Սարրայլը պաշարողական դրութիւն է յայտարարել Սալոնիկում, խիստ ուժեղ տպաւորութիւն է թողել յունաց կառավարութեան վրայ։

— Սալոնիկից հեռագրում են, որ սերբական բանակի վերատեղծումը ներկայ պատերազմի ցոյց տւած հրաշքներից մէկն է։ Սրանից վեց շաբաթ առաջ այդ բանակը, կարելի է ասել, գոյութիւն չունէր, բայց այժմ նա մի փառաւոր բան է, նրա դիսցիպլինն զարմանալի է, զօրքերի դրամադրութիւնը հիանալի։ Սերբական բանակը ձգւել է մրցոնների։ սա բանակ չէ այլ, մի ամբողջ ազգ։

— Որովհետև այժմ պարզւած են ծովային ճակատամարտի մանրամասնութիւնները, անգլիական մամուլը բոլորովին փոխել է իր կարծիքը նրա մասին։ Լրագիրների յօդւածները վերտառւած են «Յաղթութիւն», «Թշնամու մեծ պարտութիւն» և այլն։ Մամուլն ու հասարակութիւնը խիստ ցաւում է, որ անգլիական ծովակալութեան առաջին շոր ու անկատար հաղորդագրութիւնը անճիշտ տպաւորութիւն է գործել։

Խմբագիր՝

Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾՐԱՐՆԵՐ ահագին քանակութեամբ ունենալու և իմ արտադրութիւնը լինելու պատճառով առաջարկում եմ իւրաքանչիւր հազարի համար 5 ռ. 50 կոպէկից ըսկսած և աւելի։ Ростовъ-Донъ, Книжн. торг. Д. Г. Алёвсѣева, уголъ Таганр. пр. и Московск. ул., подвальное помѣщеніе. Հեռախօս 10—09։

652 7—6

Լոյս տեսաւ ընդարձակ հրատարակութեամբ

Պատկերազարդ

● ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ●

ՌԱԶՄԻ ԵՐԳԵՐ

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԷԿ

Ազգանիկի, Դրօի, Համազասպի, Քեռու, Վարդանի, Արամի, Ազգանիկի և իր Թիկնապահների, կամաւորների երգման, Ազգանիկ և իր օգնականներն, Քեռին և իր օգնականներ ու բազմաթիւ խմբական և առանձին պատկերներ, ներկայ պատերազմի վերաբերեալ բազմաթիւ նոր երգեր ու ստանաւորներ։

Դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին, գումարով գնողներին գեղջ կը լինի, ճանապարհածախսը գնողի վրայ է։

Իմ հասցէն՝ Тифлисъ, Авлабаръ, Ходживанская ул. № 16, Х. Теръ Оганесянцу, կամ Թիֆլիս, տպարան «Մամուլ»։ 669 10—5

Լոյս տեսաւ և վաճառւում է Հրատարակութ. Դ. Դաւիթ-Խանեանի և Ա. Միանսարեանի

ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

(Ըստ հայոց թեմական դպրոցների նոր ծրագրի)

Միջնակարգ դպրոցների համար

ՀԻՆԳԱՐԵՐ

(Սկզբից մինչև Արշակունեաց հարստութեան անկումը)

Հիւսեց ՍԱՀԱԿ ԹՈՐՈՍԵԱՆ

Վաճառւում է Թիֆլիսի բոլոր հայ գրախանութներում։ Գահեստը հրատարակչի մօտ, Тифлисъ, Фрейлинская, 4, Міансарову։

Գինն է մէկ ռուբլի։ 702 5—3

Մենք երեք եղբայրներ, Սարգիս, Սերոբ, Քերոբ Զինաջուրեանցներս, փընտրում ենք Իսպիր գաւառի Հունուտ գիւղացի մեր մօրը՝ Յոդիտար Ասլանեան, հարներիս՝ Արևահատ Թաթոսեան, Գայիանէ Զատիկեան, ուղերկին Անանային, հօրեղբօրորդի Կարապետին, հօրիղբօր աղջիկներ Ազնիւին, Ցաւին, Արուսեակին իրենց երեխաներով, Հայկանուշ, Իսկուհի Յարութիւնեան Զինաջուրեանցներին... Զինաջուր գիւղացի մեր ազգականներ Հաշէնեանցներին, Ճարիկեաններին, Տամուրջեանցներին, Էգոդեանցներին և Ցացած գիւղացիներին։ Հիշէն գիւղացի մեր քեռակիններ, քեռորդիներ, քեռաղջիկներ, քեռահարսներ, քեռու թոռներ Ասլանեանցներին։

Էրսիսու գաւառ, Կիսկիմ գիւղացի հօրաքրոջս Ալմասին, որդուն՝ Գրիգորին, աղջիկներ, թոռներ Ցակոբեաններին, մեր միւս մեռած հօրաքրոջ որդի Անդրանիկին, հարս Մաքիդին, աղջիկ Դշխունին և թոռներ Տէր-Թովմասեաններին, աներջս հորեղբ Դէորգ, անեղբս որդի Սարգիս (դինւոր), զարքանչներս Սանդուխտ, Մարիամ, իրենց որդիներով և հարս ու աղջիկներով Նալբանդեանցներին։

Ինչպէս նաև Իսպիրու և Էրսիսու գաւառների Կիսկիմ իր թաղերով, Թոտրջուր իր թաղերով, Մոխրակոյտ, Գուդրաշէն, Կարմիրիք, Հունուտ, Քոչ, Զինաջուր, Օձուտ, Հիշեն, Դղանց, Շարատանց, Իսպիր Ղասապայ, Էգեձոր, Զուրանկեց, Մատրանց, Կաջ, Թշաձոր, Ռոչանաղբիւր, Զիփոթ, Նիխաղ գիւղացիներին։ Խնդրում ենք ազգային գործիչներին և հայրենասէր մարդկանց գաղթականների մէջ հարց ու փորձ անելուց յետոյ տեղեկացնեն հետեւեալ հասցէով Харьковъ, Клочковская ул. № 69. Булочная, Саркису М. Чиначуряну. 683 10—3

Աղաստրայի սպառողական ընկերութիւնը հարկաւոր է

ՄԱՍՆԱԳԷՏ ՀԱՅԹՈՒԻ

և մի օգնական. պայմանների համար դիմել Թիֆլիսում, Զուլչինեան փող. 29, Սաղաթելեանին։ 710 3—

Զինուորական ծառայութեան գնացած պատճառով, խիստ ձեռնտու պայմաններով վաճառւում է

ՄԱՆՐԱՎԱՃԱՌԻ խանութ

իր բոլոր սարք ու կարգով. դիմել Վինոնի պողոտայ, № 2, Տիգրան Ցակոբեանին։ 736 2—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՆՍՏԱՐԱՆ

Մեծ քանակութեամբ ծախւում է ձեռնտու գներով և զրաստախանակներ հարցնել՝ Ա. Էնֆիաճեանից, Меликовская. № 7։ 731 3—1

ՕԳՏԵՑԷՔ ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹԻՑ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՖԵՐՋԵԱՆԻ

ՀԻՊՆՈՏԻԶՄԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱԶԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ

ԿՈՒՐՍԵՐԸ

Այս նոր կուրսերը մասնաւորապէս պատրաստւած են այն նպատակով, որ ընթերցողը կարողանայ սովորել Հիպնոտիզմը առանց ուսուցչի, առանց մեծ ծախքերի և առանց միջնորդի սոսկ մտքի ոյժով։

Ընթերցողը Հիպնոտիզմին տիրապետելուց յետոյ, կարող է բուժել զանազան տեսակ հիւանդութիւններ, որոնք նշանակւած են 32—եր. դասում։

Հիպնոտիզմով կարելի է վերացնել վատ սովորութիւններ երեխաների մէջ. գողութիւն, ծուլութիւն, ծխել, մի խօսքով արմատախիլ անել ինչ որ վատ է ներշնչել ինչ որ լաւ է և օգտակար։

Հիպնոտիզմով դուք կարող էք ուղղակի ձեր ենթակային հեռու վայրեր, ուր գտնւում են ձեր սիրելիները և բարեկամները, որ նրանցից տեղեկութիւն բերի ձեզ։ Հիպնոտիզմով դուք կարող էք, բացի գաղտնիքների մէջ թափանցելուց, տա և ապրեցուցիչ և ծիծաղ առաջ բերող սէանսներ (տեսարաններ)։ Հիպնոտիզմով դուք կարող էք իմանալ ով է վերցրել ձեր իրերը, կամ ուր էք կորցրել, կամ թաղցրած իրերի տեղը։

Արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետևեալ հասցէով. Сусанна Шекержянъ, Вельяминовская ул., № 22, Тифлисъ.

ՏՐԻՊԼԷՐ (ՈՍԿՈՒՆԱՅ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ)

պ. պ. բժիշկներն ու մասնագէտները առաջարկում են որպէս նոր արմատական և կատարելագործւած միջոց սուր և տեսակ տեսակ նկի դէմ, ինչպէս նաև նրա ամեն տեսակ բարդութիւններին։ Սեռական ներների ժամանակ, այն է միգախոզովակի, միզապարկի, գեղձերի բորբոքման, խոցոտման, ամորձիների բորբոքման, ուրերի, ձեռքերի, մէջքի, ականջների ու այլ տեղերի խիթքի ու ցաւի դէմ։

№ 765 „Ա" ԿԱՊՍԻԻԼՆԵՐԸ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Բոյսերաւած են բժշկական խորհրդից։ «Ա» կապսիւլները բոլորովին անվնաս են ընդունող մարդոյ։ Կազմածքի համար և միաժամանակ աջողութեամբ կարող են գործածել թէ տղամարդիկ և թէ կանայք։ «Ա» կապսիւլները գործածելիս կարիք չկայ ոչ սպրինցովկայի (պլան), ոչ էլ ուրիշ ցաւման և ոչ էլ բուժեր գործածելու։ Նոյնպէս չի պահանջւում կողմնակի օգնութիւն, այլ ամեն պէտք է կնիկ ՏԱՀ կապսիւլը, այնպէս որ ամեն մի անհատ կարող է սկսել բժշկել ամենայն հանգամանքներում ու ամեն պահանջի մէջոցին։ Բացի դրանից բժշկութեան ամեն ժամանակ կարիք չկայ առանձին ու խիստ դիէտա (փանրից) պահելու։ Այլ ամենագլխաւորն այն է որ բժշկութեան մէջոցին պէտք է հեռու մնայ ամեն տեսակ ոգելից խմիչքներից և տեսակ յարաբերութիւն ունենալուց։ 60 կապսիւլ պարունակող 1 տուփի գինը 3 ռ. 50 կ. է, կես տուփինը—30 կապսիւլ—2 ռ. 25 կ.։ Մի տուփը զրկելու համար 40 կ., իսկ 3 տուփ պատուիրելու դէպքում ճանապարհածախս չի նշանակւում. այդ մեր հաշիւն է։

◆ ◆ ◆ ՈՒՂԱՐԿԻՈՒՄ Է ՎԵՐԱԴԻՐ ՎՃԱՐՈՎ ◆ ◆ ◆

3 ռուբլի նախավճար ստանալուց յետոյ։ Լիակատար բժշկելու համար հարկաւոր կը լինի 4-ից մինչև 6 տուփ կապսիւլ։ Թէ պատուէրները և թէ նամակները ուղարկել կարելի է հետևեալ հասցէով՝ Е. М.-Акопову, ТИФЛИСЪ, Красногорская, 3, близъ пл. кн. Воронцову, առաւօտեան 9-ից մինչև երեկոյեան 8 ժամը։ Իսկ անձամբ տեսնել կարելի է երեկոյեան ժամը 5—7։

Ներկայացուցչ. բաժանմունք, միայն տեղական հիւանդների համար՝ БАКУ, Красноводская ул., № 52, А. А. Мазаанъ. 996 8—1

ՓԻՐՈՒՄԵԱՆ

Т-во ГРАММОФОНЪ

Владѣльцы

АБГАРОВЪ И АГАДЖАНОВЪ

Эриванская площадь.

Ստացւած են մեծ քանակութեամբ նոր պլաստինկաներ
Հարս եւ սկեսուրի կռիւը,
Ամուսինների կռիւը,
Մաշտի-Իրաթ (նա չինի, սա ինի),
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՉԸ,
Օրթանալի էֆֆը,
Գիմնազիստ եւ այլն

Երգում և արտասանում է դերասան Գ. ՓԻՐՈՒՄԵԱՆԸ

Ստացւած են նոյնպէս յայտնի երգիչ **ՍԷԻԴԻ** նոր երգած պլաստինկաները պարսկերէն լեզուով,

Նոր ասիական պարեր,

ԳԱՐՄՈՆԻ եւ ՍԱԶԱՆԴԱՐԻ ՆԻԱԳԱԾՈՒԹԵԱՄԲ

Ազդ.—Շուտով կը ստացւին „ԱՐՇԻՆ ՄԱԼ-ԱԼԱՆԻ" նոր պլաստինկաները, որ երգել է յայտնի դերասան եւ Ասկեարի դերը ամենից յաջող կատարող Յ. Բաղդասարեանը։

995 0—1

ՍԷԻԴ

Հրատարակութիւն «Լոյս» Ընկ. Дозв. воен. ценз. Типографія „МАМУЛЪ", Лорисъ-Меликовская ул. № 22.

digitised by A.R.A.R.@